

## Մրցույթի հայտարարություն

«Սյունիքի մարզի «Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

«Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն «Ս.Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց», «Սվարանցի միջնակարգ դպրոց» և «Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիլ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը, հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ում 2022 թվականի հուլիսի 4-ից մինչև հուլիսի 8-ը ներառյալ, սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 15 ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 15.30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 30-ին ժամը 13:00-ին «Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ում: Հասցե՝ Սյունիքի մարզ հ. Տաթև. բն. Տանձատափ, փ.2, 2.21

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ Արմենուհի Վարդազարյանին: Հեռ. (077 55- 25- 44), էլ. [hwugte tandzatap@schools.am](mailto:hwugte tandzatap@schools.am):